

ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ



Գործողությունների ծրագիր
2012-2015թթ.

Հաստատված՝
2013թ. հուլիսի 26-ին կայացած ՀՀ վարչապետին
կից Արդյունաբերական խորհրդի նիստին

Սույն Գործողությունների ծրագիրը բխում է ՀՀ կառավարության N 49 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունից: Ներկայացված գործողությունների ծրագիրը սահմանում է արդյունաբերական ռազմավարության իրականացման 4-ամյա ծրագիր 2012-2015 թթ. ժամանակահատվածում:

Գործողությունների ծրագիրը ներկայացված է 3 մակարդակով՝ ռազմավարական ուղղությունների, ռազմավարական նախաձեռնությունների և գործողությունների: Տարբեր մակարդակի գործողությունները խմբավորված են ռազմավարական նախաձեռնությունների, վերջիններս իրենց հերթին պատկանում են սահմանված վեց ռազմավարական ուղղություններից մեկին: Յուրաքանչյուր ուղղության համար սահմանված են պատասխանատու և իրականացնող կառույցները, ընդ որում հիմնական պատասխանատուներն առանձնացված են գործողության այլ մասնակիցներից:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում ռազմավարական ուղղություններն են՝

1. Որակի վերահսկման համակարգի ստեղծում
2. Տեղական հումքային բազայի ստեղծում
3. Կարողությունների զարգացում
4. Ֆինանսական աջակցություն
5. ԱԱԿ-ների ներգրավում
6. Վաճառքների խթանում

Յուրաքանչյուր տարվա վերջում ոլորտային խորհուրդը կհաստատի Գործողությունների ծրագիրը՝ հաջորդ երեք տարիների համար:

Նշումներ.

1. Սույն Գործողությունների ծրագրում պետության կողմից համաֆինանսավորվող գործողությունների իրականացման նախապայման է մասնավոր հատվածի համաֆինանսավորումը:
2. Սույն Գործողությունների ծրագրում ընդգրկված են նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրով» (ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագիր») պլանավորված գործողությունները Հայաստանի դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտում, որոնցից յուրաքանչյուրի իրականացումը ենթակա է պարտադիր հաստատման ԱՄՆ ՄԶԳ կողմից:

ՈՍԱԶՆԱԿԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ ԼՈՒՍՏՈՒՄ

ՌՈՒ 1. ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՍՏԵՂԾՈՒՄ

ՌՈՒ 2. ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԱՅԻՆ
ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ՌՈՒ 3. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՅՈՒՄ

ԴՄ ԵՂՈՒԹՅԱՆ ԼՈՒՍՏՈՒՄ ԵՎ ՈՒՂՈՒԹՅԱՆ ԼՈՒՍՏՈՒՄ

ՌՆ 1.1. ՊԱԳ և ղեկավարության ոլորտի հետ կապված այլ ՊԳ իրավական դաշտի ամբողջականացում

ՌՆ 1.2. Աջակցություն տեղական ընկերություններին՝ արտադրությունները ՊԱԳ պահանջներին համապատասխանեցնելու և ղեկերի գրանցման փաստաթղթերի փաթեթը մշակելու գործում

ՌՆ 1.3. ՀՀ ՊԱԳ հավաստագրման մարմնի կողմից տրվող հավաստագրերի՝ միջազգային ճանաչման գործընթացին ուղղված քայլերի իրականացում

ՌՆ 1.4. Տեղական ընկերությունների ՊԱԳ հավաստագրում

ՌՆ 2.1. Հումքի արտադրության հիմնման իրագործելիության ուսումնասիրություն

ՌՆ 2.2. Իրագործելիության ուսումնասիրության դրական արդյունքների դեպքում Հայաստանում ղեկավարության և բիոտեխնոլոգիաների հումքի արտադրության հիմնում

ՌՆ 3.1. Աջակցություն ԴԱՆ միության «Ջի էքս Պի» գերազանցության կենտրոնին վերապատրաստման դասընթացների մշակման և իրականացման գործում և դասընթացների անցկացում

ՌՆ 3.2. Գիտություն-արտադրություն համագործակցության նպատակով՝ բուհ-արտադրող շրջանակային համաձայնագրի կնքում

ՌՆ 3.3. Աշխատուժի տվյալների բազայի ստեղծում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄ ԿՐԻՄԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄ

ՌՈՒ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒ 5. ԱԱԿ-ների
ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ՌՈՒ 6. ՎԱՃԱՌՔՆԵՐԻ
ԽԹԱՆՈՒՄ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՆ)

- ՌՆ 4.1. Ընկերությունների ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման մեխանիզմի ապահովում
- ՌՆ 4.2. Արտահանման ֆինանսավորման մեխանիզմի գործարկում
- ՌՆ 4.3. Արտերկրում դեղերի գրանցման ծառայությունների ձեռք բերման ծախսերի համաֆինանսավորում
- ՌՆ 4.4. Ներդրումներ ոլորտի տեղական ընկերությունների կապիտալում

- ՌՆ 5.1. Ոլորտի միջազգային մասնակիցների և ներդրողների գործարար համաժողովի անցկացում Հայաստանում
- ՌՆ 5.2. Շնորհանդեսների (roadshow) անցկացում նպատակային երկրներում

- ՌՆ 6.1. Արտահանման շուկաների մասին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում
- ՌՆ 6.2. Ներգնա և արտագնա գործարար առաքելությունների իրականացում
- ՌՆ 6.3. Ներքին շուկայում տեղական արտադրանքի վերաբերյալ իրազեկության բարձրացում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՈՒՆ 1.1. ՊԱԳ և դեղագործության ոլորտի հետ կապված այլ ՊԳ իրավական դաշտի ամբողջականացում	Հայաստանի դեղագործության ոլորտում ՊԳ հավաստագրման իրավական դաշտ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող*	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.1.1. ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 26-ի N 734-Ն որոշմամբ սահմանված իրավական փաստաթղթերի ընդունմանն ուղղված համապատասխան քայլեր	<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	-	Վերջնաժամկետ՝ 2014թ. հունվար	ՊԱԳ և ՊԲԳ հավաստագրման համար անհրաժեշտ իրավական դաշտ
1.1.2. Դեղագործական ոլորտում Պատշաճ լաբորատոր գործունեության (ՊԼԳ), Պատշաճ կլինիկական գործունեության (ՊԿԳ), Պատշաճ պահման գործունեության (ՊՊԳ) և Դեղաբույսերի պատշաճ մշակման և հավաքման գործունեության (ԴՊՄՀԳ) պահանջների օրենսդրորեն ամրագրմանը և ներդրմանը ուղղված համապատասխան քայլեր	<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	-	ՀՀ կառավարության կողմից օրենսդրորեն ամրագրմանը ուղղված համապատասխան քայլեր – վերջնաժամկետ՝ 2012թ. դեկտեմբեր Ներդրմանը ուղղված համապատասխան քայլեր - վերջնաժամկետ՝ 2014թ. հունվար	ՊԼԳ, ՊԿԳ, ՊՊԳ և ԴՊՄՀԳ ներդրում
1.1.3. ՀՀ կառավարության 25.11.2010թ. N 1603-Ն որոշմամբ հաստատված «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնների» վերանայում, լրամշակում և ներդաշնակեցում Եվրամիության գործող ՊԱԳ կանոններին և պահանջներին	<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	Բյուջե՝ ենթակա է գնահատման Ֆինանսավորման աղբյուր՝ դոնոր կազմակերպություններ	<i>Սկզբնական ժամկետ՝ 2013թ. Հունվարի 1</i> <i>Շարունակական գործողություն</i> Հետագա համապատասխանեցումները կիրականացվեն կախված ԵՄ կանոնակարգերի փոփոխություններից	ՀՀ կառավարության 25.11.2010թ. N 1603-Ն որոշմամբ հաստատված «Դեղերի ՊԱԳ կանոնների» փաստաթուղթ՝ համաձայն Եվրամիության գործող ՊԱԳ կանոնների և պահանջների

* Այսուհետ, «պատասխանատու/իրականացնող» սյունակում նշեցված և շեղատառ նշված են գործողությունների հիմնական պատասխանատու/իրականացնողները:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 1.2. Աջակցություն տեղական ընկերություններին՝ արտադրությունը ՊԱԳ պահանջներին համապատասխանեցնելու և դեղերի գրանցման փաստաթղթերի փաթեթը մշակելու գործում	Հայաստանի դեղագործության ոլորտում ՊԱԳ հավաստագրված ընկերություններ

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ընթացիկ արդյունք
<p>1.2.1. Աջակցություն տեղական ընկերություններին՝ արտադրությունը ՊԱԳ պահանջներին համապատասխանեցնելու գործում</p> <ul style="list-style-type: none"> – ՊԱԳ պահանջներին համապատասխանելիության դիտարկման ենթակա տեղական արտադրողների ցանկի պատրաստում – Միջազգային համապատասխան տեսուչի ընտրություն – Միջազգային տեսուչի և ՀՀ ԱՆ ԴԲՏՓԿ տեսուչի կողմից դիտարկման ցանկում ընդգրկված տեղական արտադրողների առաջին դիտարկում և համապատասխան եզրակացության պատրաստում յուրաքանչյուր ընկերության համար, որում կնշվեն ՊԱԳ կանոններին համապատասխանելիության հիմնական բացերը – Խորհրդակցություններ ընկերությունների հետ՝ բացահայտված հիմնական թերությունների շուրջ – Միջազգային տեսուչի երկրորդ այց Հայաստան և ՀՀ ԱՆ ԴԲՏՓԿ տեսուչի հետ համատեղ վերը նշված տեղական արտադրողների երկրորդ դիտարկում և ՊԱԳ պահանջներին համապատասխանելիության եզրակացություն* 	<p>ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>Բյուջե՝ ենթակա է գնահատման</p> <p>Ֆինանսավորման աղբյուր՝ ԱՄՆ ՄԶԳ EDMC ծրագիր</p>	<p>Վերջնաժամկետ՝ 2012թ. դեկտեմբեր</p> <p>Նշում. Միջազգային փորձագետի այցեր՝ 2012թ. հունիս և դեկտեմբեր</p>	<p>Տեղական արտադրողների՝ ՊԱԳ պահանջներին համապատասխանություն</p>
<p>Նշում * Միջազգային տեսուչի երկրորդ այցը պայմանական է և կախված է առաջին այցի և դիտարկման արդյունքներից:</p>				

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 1.2. Աջակցություն տեղական ընկերություններին՝ արտադրությունը ՊԱԳ պահանջներին համապատասխանեցնելու և դեղերի գրանցման փաստաթղթերի փաթեթը մշակելու գործում

Ակնկալվող արդյունք

Հայաստանի դեղագործության ոլորտում ՊԱԳ հավաստագրված ընկերություններ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.2.2. Եվրամիության «Դեղերի գրանցման հայտատուների համար» հայերեն ուղեցույցի մշակում	<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	Բյուջե՝ ենթակա է գնահատման <i>Նշում.</i> Համաֆինանսավորման աղբյուր՝ ԱՄՆ ՄԶԳ EDMC ծրագիր	Վերջնաժամկետ՝ 2012թ. դեկտեմբեր	Եվրամիության «Դեղերի գրանցման հայտատուների համար» հայերեն ուղեցույց

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 1.3. ՀՀ ՊԳ հավաստագրման մարմնի կողմից տրվող հավաստագրերի միջազգային ճանաչման գործընթացին ուղղված քայլերի իրականացում

Ակնկալվող արդյունք

ՀՀ ՊԳ հավաստագրման մարմնի անդամակցում «Դեղագործական տեսչությունների համաձայնագրին և դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային» և «Միջազգային առևտրում շրջանառելու համար դեղագործական արտադրանքի որակի հավաստագրման ԱՀԿ սխեմային»

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ընթացիկ արդյունք
1.3.1. ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի տեսուչների արտերկրյա վերապատրաստում	<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	Ֆինանսավորման աղբյուր՝ ԱՄՆ ՄԶԳ EDMC ծրագիր	<i>Մկիզբ՝ 2012թ. դեկտեմբեր, շարունակական</i>	ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի որակավորված տեսուչներ: Տարեկան առնվազն 2 տեսուչ
1.3.2. ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի կողմից «Դեղագործական տեսչությունների համաձայնագրին և դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային» և «Միջազգային առևտրում շրջանառելու համար դեղագործական արտադրանքի որակի հավաստագրման ԱՀԿ սխեմային» անդամակցության հայտի ներկայացում	<i>ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</i>	Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	<i>Մկիզբ՝ 2013թ. ապրիլ</i>	ՀՀ ՊԳ հավաստագրման մարմնի անդամակցման հայտ ՝ «Դեղագործական տեսչությունների համաձայնագրին և դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային» և «Միջազգային առևտրում շրջանառելու համար դեղագործական արտադրանքի որակի հավաստագրման ԱՀԿ սխեմային»
1.3.3. ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի կողմից «Դեղագործական տեսչությունների համաձայնագրին և դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային» և «Միջազգային առևտրում շրջանառելու համար դեղագործական արտադրանքի որակի հավաստագրման ԱՀԿ սխեմային» Անդամագրում/անդամագրում	<i>ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</i>	Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	<i>Վերջնաժամկետ՝ 2015թ. դեկտեմբեր</i>	ՀՀ ՊԳ հավաստագրման մարմնի անդամակցում «Դեղագործական տեսչությունների համաձայնագրին և դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային» և «Միջազգային առևտրում շրջանառելու համար դեղագործական արտադրանքի որակի հավաստագրման ԱՀԿ սխեմային»

ՈՌԻ 1. Որակի վերահսկման համակարգի ստեղծում

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 1.4. Տեղական ընկերությունների ՊԱԳ հավաստագրում

Պատշաճ արտադրական գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրող ընկերություններ

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.4.1. Տեղական ընկերությունների ՊԱԳ հավաստագրում	<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. հունվար	ՊԱԳ հավաստագրված տեղական արտադրողներ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 2.1. Հումքի արտադրության հիմնման իրագործելիության ուսումնասիրություն	Հումքի արտադրության հիմնման իրագործելիության համապարփակ վերլուծություն

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.1.1. Տեխնիկական առաջադրանքի նկարագրության կազմում	<i>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ԶՀԳ, ԴԱՆ Միություն</i>	-	Վերջնաժամկետ՝ 2013թ. Փետրվար	Առաջադրանքի հաստատված նկարագրություն
2.1.2. Իրագործելիության ուսումնասիրություն <ul style="list-style-type: none"> - Մրցույթի անցկացում - Հաղթող մասնագիտական խորհրդատվական ընկերության ընտրություն - Իրագործելիության ուսումնասիրության* իրականացում մասնագիտական խորհրդատվական ընկերության կողմից - Ուսումնասիրության արդյունքների ներկայացում ոլորտային խորհրդին - Դրական եզրակացության դեպքում՝ ներդրումային ծրագրի կազմման վերաբերյալ խորհրդում որոշման կայացում 	<i>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ԶՀԳ, մասնագիտական խորհրդատվական ընկերություն</i>	Բյուջե՝ ~ 11.4 մլն. ՀՀ դրամ Ֆինանսավորման աղբյուր՝ դոնոր կազմակերպություն	Վերջնաժամկետ՝ 2013թ. հուլիս	Ուսումնասիրության արդյունքների ներկայացում և քննարկում ոլորտային խորհրդում

*Կոնսուլտանտներին ինչպես առկա գիտահետազոտական բազայի հիման վրա ստեղծելու հնարավորությունները, այնպես էլ՝ այլ հնարավոր տարբերակները:

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 2.2. Հայաստանում դեղագործության և բիոտեխնոլոգիաների հումքի արտադրության հիմնում*

Ակնկալվող արդյունք

Հայաստանում դեղագործության և բիոտեխնոլոգիաների հումքի արտադրություն

Գործողություն	Պատասխանատու/ Իրականացնող	Բյուջե/ Ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.2.1. Ներդրումների ներգրավմանն ուղղված գործողություններ – Պետական մասնակցության ձևաչափի հստակեցում – Արտադրական գործունեության մոդելի հստակեցում – Հնարավոր ներդրողների նույնականացում – Բանակցություններ հնարավոր ներդրողների հետ – Ներդրողների ներգրավում – Արտադրության հիմնում և գործարկում	ԶԶԳ, ԴԱՆ Միություն	Ֆինանսավորման կարիքը կհստակեցվի իրագործելիության ուսումնասիրության արդյունքում	Ժամկետը կհստակեցվի իրագործելիության ուսումնասիրության արդյունքում	Ներդրումների ներգրավում, արտադրության գործարկում
<p>Նշումներ * 2.2. ռազմավարական նախաձեռնությունը պայմանական է, որի իրականացումը կախված է ՌՆ 2.1. Հումքի արտադրության հիմնման իրագործելիության ուսումնասիրության դրական եզրակացությունից:</p>				

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՈՒ 3.1. Աջակցություն ԴԱՆ միության «Ձի էքս Պի» գերազանցության կենտրոնին վերապատրաստման դասընթացների մշակման և իրականացման գործում և դասընթացների անցկացում*

Վերապատրաստված և որակավորված տեղական մասնագետներ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.1.1. Դասընթացների մշակման և նախապատրաստական աշխատանքների իրականացում</p> <ul style="list-style-type: none"> - Տեղական արտադրող ընկերություններում կարիքների հստակեցում և վերապատրաստման դասընթացների թեմաների ընտրություն - Նախատեսվող դասընթացներին տեղական ընկերությունների և վերապատրաստող մասնագետների մասնակցության հստակեցում - Դասընթացավար համապատասխան մասնագետի ընտրություն 	<p><i>ԴԱՆ միություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն,</i></p>	<p>Բյուջե՝ ենթակա է հստակեցման (կախված կոնկրետ դասընթացներից և վերապատրաստող մասնագետների վարձատրությունից)</p> <p>ֆինանսավորման աղբյուր՝ ոլորտի ընկերություններ, ԱՄՆ ՄԶԳ EDMC ծրագիր</p>	<p>Շարունակական գործողություն, ակնկալվում է 2012-2015թթ.-ին (ժամկետները ենթակա են հստակեցման)</p> <p>ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագիր» շրջանակներում ՊԴԳ և ՊՊԳ դասընթացները նախատեսվում է անցկացնել 2012թ.-ին</p>	<p>Նախատեսվող դասընթացներին տեղական ընկերությունների և վերապատրաստող մասնագետների մասնակցության հաստատում</p>
<p>3.1.2. Դասընթացների անցկացում</p> <ul style="list-style-type: none"> - Դասընթացների անցկացում տեղական արտադրող ընկերությունների համար - Դասընթացների անցկացում տեղական վերապատրաստող մասնագետների համար 	<p><i>ԴԱՆ միություն</i></p>	<p>Բյուջե՝ ենթակա է հստակեցման (կախված կոնկրետ դասընթացներից և վերապատրաստող մասնագետների վարձատրությունից)</p> <p>ֆինանսավորման աղբյուր՝ ոլորտի ընկերություններ, ԱՄՆ ՄԶԳ EDMC ծրագիր</p>	<p>Շարունակական գործողություն, ակնկալվում է 2012-2015թթ.-ին (ժամկետները ենթակա են հստակեցման)</p> <p>ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագիր» շրջանակներում ՊԴԳ և ՊՊԳ դասընթացները նախատեսվում է անցկացնել 2012թ.-ին</p>	<p>Դասընթացների հավաստագրերի տրամադրում մասնակիցներին</p>

* ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագիր» շրջանակներում նախատեսվում է Պատշաճ դեղատնային գործունեություն (ՊԴԳ) և Պատշաճ պահման գործունեություն (ՊՊԳ) դասընթացների ֆինանսավորում 2012թ.-ին: Ընթացքում հնարավոր է նաև այլ դասընթացների ֆինանսավորում ԱՄՆ ՄԶԳ «EDMC ծրագիր» շրջանակներում:

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 3.2. Գիտություն-արտադրություն համագործակցության նպատակով բուհ*-արտադրող շրջանակային համաձայնագրի կնքում

Բուհերում մասնագիտական կրթության որակի բարելավում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.2.1 Գիտություն-արտադրություն համագործակցության նպատակով բուհ*-արտադրող շրջանակային համաձայնագրի կնքում</p> <ul style="list-style-type: none"> - Բուհ-արտադրող շրջանակային համաձայնագրի կնքման դրույթների և սկնկավվող համագործակցության վերաբերյալ քննարկում ոլորտային խորհրդում - Ոլորտի բուհերի և արտադրողների միջև երկկողմ և բազմակողմ քննարկումներ - Ակնկալվող համաձայնագրի սկզբունքների և առաջարկվող հստակ մեխանիզմների համատեղ մշակում, համաձայնեցում և համաձայնագրի կնքում՝ հետևյալի վերաբերյալ. <ul style="list-style-type: none"> • արտադրող ընկերություններում ուսանողների ուսումնական պրակտիկայի պարբերական անցկացման հնարավորությունները • արտադրողների մասնագիտական աշխատուժի կարիքի գնահատումը և բուհերի կողմից դրանց հասցեագրման հնարավորությունները • ընկերություններում բուհերի շրջանավարտների աշխատանքի ընդունման նախնական պայմանավորվածություններ • արտադրողների թիրախային ներգրավվածության հնարավոր ձևաչափերը՝ բուհերի լաբորատոր բազայի վերազինման շրջանակներում** - Համաձայնագրի շրջանակներում բուհ-արտադրող համագործակցության իրականացում 	<p>Բուհեր, արտադրողներ, ԴԱՆ միություն ՀՀ կրթության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>-</p>	<ul style="list-style-type: none"> • Համաձայնագրի կնքում - 2013թ. մարտ • Համագործակցություն - շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. ապրիլ 	<p>Բուհ-արտադրող շրջանակային համաձայնագիր</p>
<p>Նշումներ</p> <p>* 3.2 ռազմավարական նախաձեռնության համատեքստում, այսուհետ, մասնագիտական կրթության որակի բարելավումը և հղումը բուհերին հատկապես թիրախում է ոլորտի 2 առաջատար բուհերի համապատասխան բաժիններին</p> <ol style="list-style-type: none"> 1. Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի դեղագիտական ֆակուլտետ, 2. Երևանի Պետական Համալսարանի քիմիայի ֆակուլտետ: <p>3.2 ռազմավարական նախաձեռնության համատեքստում, ի լրումն վերոնշյալ 2 բուհերի, դիտարկվում են նաև ոլորտի մնացյալ բուհերը:</p> <p>** Տե՛ս գործողություն 3.2.2</p>				

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 3.2. Գիտություն-արտադրություն համագործակցության նպատակով բուհ-արտադրող շրջանակային համաձայնագրի կնքում

Բուհերում մասնագիտական կրթության որակի բարելավում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.2.2. Բուհերի լաբորատոր բազայի արդիականացում</p> <ul style="list-style-type: none"> - Բուհերի լաբորատոր բազայի արդիականացման վերաբերյալ քննարկում ոլորտային խորհրդում - Ոլորտի 2 առաջատար բուհերի և արտադրողների միջև երկկողմ քննարկումներ և բանակցություններ՝ - Բուհերի լաբորատոր բազայի ակնկալվող արդիականացման սկզբունքների և առաջարկվող հստակ մեխանիզմների համատեղ մշակում, համաձայնեցում և եռակողմ համաձայնագրի կնքում, բուհերի, արտադրողների և պետական հատվածի միջև հետևյալի վերաբերյալ <ul style="list-style-type: none"> • սարքավորումների ընտրություն • սարքավորումների սեփականություն և տնօրինում - Բուհերի լաբորատոր բազայի արդիականացում <ul style="list-style-type: none"> • սարքավորումների մատակարարների նույնականացում և ընտրություն • սարքավորումների գնում և տեղադրում • սարքավորումների ինտեգրում ուսումնական ծրագրերի մեջ 	<p>Բուհեր ,արտադրողներ, ՀՀ կրթության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>Բյուջե՝ ~40 մլն. ՀՀ դրամ, Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե (34%), համաձայնագիրը կնքած բուհեր (33%), արտադրողներ (33%)</p> <p>Նշումներ. Համաձայնագիրը կնքած բուհերը ֆինանսավորում են իրենց բուհի լաբորատոր բազայի վերագինման 33%-ը: Վերոնշյալ 40 մլն. ՀՀ դրամը վերաբերում է միայն 2013թ.-ին: Մյուս տարիների բյուջեն ենթակա է հստակեցման ըստ պահանջի:</p>	<ul style="list-style-type: none"> • Նախապատրաստական աշխատանքներ (համաձայնագրի մշակում և կնքում). 2013թ. մարտ • Լաբորատոր բազայի արդիականացում. պարբերական գործողություն, <i>սկիզբ 2014թ. դեկտեմբեր</i> պարբերականությունը, ըստ պահանջի, ենթակա է հստակեցման • 2013թ. սեպտեմբերի վերջ՝ <i>բուհերի լաբորատոր բազայի արդիականացման ծրագրի մշակում</i> • 2013թ. հոկտեմբեր <i>Համագործակցության շրջանակի մշակված ձևաչափի հիման վրա համաձայնագրի /պայմանագրի/ ստորագրում</i> 	<p>Բուհերի լաբորատոր բազայի արդիականացման վերաբերյալ եռակողմ համաձայնագիր</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 3.2. Գիտություն-արտադրություն համագործակցության նպատակով բուհ-արտադրող շրջանակային համաձայնագրի կնքում

Բուհերում մասնագիտական կրթության որակի բարելավում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.2.3. Օժանդակություն բուհերի կրթական ծրագրերի և այլ ենթակառուցվածքների զարգացմանը</p> <ul style="list-style-type: none"> – Ոլորտի կրթական կարիքների գնահատում՝ հիմնված տեղական արտադրողների և մասնագիտական կրթական հաստատությունների նկատառումների վրա – Մասնագիտական կրթության որակի բարելավման հստակ քայլերի մշակում – Օժանդակություն կրթական ծրագրերի և մեթոդների թարմացմանը – Օժանդակություն դասախոսական անձնակազմի պարբերական վերապատրաստմանը – Օժանդակություն գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը – Օժանդակություն որակի վերահսկման համակարգին 	<p>Համաձայնագիրը կնքած բուհեր և արտադրողներ, ԴԱՆ միություն</p>	<p>Բյուջե՝ ենթակա է գնահատման</p> <p>Ֆինանսավորման աղբյուր՝ դոնոր կազմակերպություններ</p>	<p>Շարունակական գործողություն, ակնկալվում է 2012-2015թթ.-ին (ժամկետները ենթակա են հստակեցման)</p>	<p>Վերամշակված կրթական ծրագրեր և վերապատրաստված դասախոսական անձնակազմ</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.3. Աշխատուժի տվյալների բազայի ստեղծում	Տեղական ընկերություններին իրենց պահանջարկած աշխատուժով ապահովում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.3.1. Աշխատուժի տվյալների բազայի ստեղծում</p> <ul style="list-style-type: none"> – Ոլորտի առկա աշխատուժի և մասնագիտական բուհերի շրջանավարտների տվյալների հավաքագրում (այս համատեքստում կարող են օգտագործվել վերոնշյալ բուհերի, ԴԱՆ Միության, տեղական ընկերությունների և ոլորտի այլ մասնակիցների ռեսուրսները) – Տվյալների մուտքագրում, մշակում և համակարգում 	<i>ԴԱՆ միություն</i>	<p>Բյուջե՝ ենթակա է գնահատման</p> <p>Ֆինանսավորման աղբյուր՝ ԴԱՆ միություն և շահառու ընկերություններ՝ այլ շահառուների համաֆինանսավորմամբ</p>	2012թ. IV եռամսյակ	Ընկերություններին հասանելի բուհերի շրջանավարտների, մասնագետների տվյալների էլեկտրոնային բազայի առկայություն
<p>3.3.2. Աշխատուժի տվյալների բազայի շարունակական թարմացում</p> <ul style="list-style-type: none"> – Տվյալների հրապարակայնացում շահառուների համար և տրամադրում ըստ պահանջի – Տվյալների թարմացում 	<i>ԴԱՆ միություն</i>	<p>Բյուջե՝ ենթակա է գնահատման</p> <p>Ֆինանսավորման աղբյուր՝ ԴԱՆ միություն և շահառու ընկերություններ՝ այլ շահառուների համաֆինանսավորմամբ</p>	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. I եռամսյակ	Նոր աշխատակիցների փնտրման և ներգրավման գործընթացի բարելավում

Ռազմավարական նախաձեռնության անվանում		Ակնկալվող արդյունք		
ՈՆ 4.1. Ընկերությունների ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման մեխանիզմի ապահովում		Ընկերությունների ներդրումային ծրագրերի իրագործում		
Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>4.1.1. ՀՀ արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման կարգի մշակում</p> <ul style="list-style-type: none"> - Սկզբունքների մշակում <ul style="list-style-type: none"> • կապիտալ ներդրումներ • արտահանման ուղղվածություն - Կանոնակարգի մշակում <ul style="list-style-type: none"> • ֆինանսավորման նվազագույն և առավելագույն ծավալների հատկորոշում • այլ - Համապատասխան հստակ մեխանիզմի ստեղծում 	<p><i>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ</i></p>	-	<p>Սկիզբ՝ 2012թ. հուլիս, վերջնաժամկետ՝ 2012թ. Դեկտեմբեր</p>	<p>ՀՀ արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերի պետական աջակցության գործող մեխանիզմի ասկայություն</p>
<p>4.1.2. ՀՀ արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ապահովում</p> <ul style="list-style-type: none"> - Հայտերի ընդունում - Հայտերի քննություն - Ֆինանսավորման որոշման կայացում - Ֆինանսավորում 	<p><i>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ</i></p>	<p>Բյուջե՝ ~ 40 մլն.* ՀՀ դրամ տոկոսադրույքի սուբսիդավորման գումար տարեկան</p> <p>Ֆինանսավորման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե</p> <p>* Նախատեսվում է պետական աջակցություն ծրագրի շրջանակներում ապահովել ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ – ի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքի 3 %-ի սուբսիդավորումը</p>	<p>Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. հունվար</p>	<p><i>Տարեկան</i> Ֆինանսավորված 3-4 ներդրումային ծրագիր</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում		Ակնկալվող արդյունք		
ՌՆ 4.2. Արտահանման ֆինանսավորման մեխանիզմի գործարկում		Արտահանման հավելյալ աճ արտահանման ֆինանսավորման մեխանիզմների գործարկման շնորհիվ		
Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.2.1. Արտահանման ֆինանսավորման մեխանիզմի մշակում (օր.՝ արտահանման պայմանագրերի հիման վրա ֆինանսավորում, ֆակտորինգ) – Միջազգային փորձի ուսումնասիրում – Սկզբունքների և կանոնակարգի մշակում – Համապատասխան հստակ մեխանիզմի ստեղծում	<i>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ</i>	-	Վերջնաժամկետ՝ 2012թ. դեկտեմբեր	Արտահանման ֆինանսավորման հաստատված մեխանիզմ
4.2.2. Արտահանման ֆինանսավորման մեխանիզմի գործարկում – Հայտերի ընդունում – Հայտերի քննություն – Ֆինանսավորման որոշման կայացում – Ֆինանսավորում	<i>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ</i>	Ֆինանսավորման աղբյուր՝ ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. հունվար	Արտահանման ֆինանսավորման իրականացված ծրագրեր

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌԼ 4.3 Արտերկրում դեղերի գրանցման ծառայությունների ձեռք բերման ծախսերի համաֆինանսավորում	Տեղական ընկերությունների արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.3.1. Արտերկրում դեղերի գրանցման ծառայությունների ձեռք բերման ծախսերի համաֆինանսավորման պետական աջակցության կարգի մշակում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ԴԱՆ միություն	-	Սկիզբ՝ 2013թ. մարտ	Արտերկրում դեղերի գրանցման ծառայությունների ձեռք բերման ծախսերի համաֆինանսավորման պետական աջակցության հաստատված կարգ
4.3.2. Արտերկրում դեղերի գրանցման ծառայությունների ձեռք բերման ծախսերի համաֆինանսավորման պետական աջակցության տրամադրում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ԴԱՆ միություն	Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության միջոցառումների իրականացման 2013թ. ծրագրի շրջանակներում 50%- Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, 50% շահառու ընկերություն	Սկիզբ՝ 2013թ. ապրիլ Պետական աջակցության տրամադրում պարբերական գործողություն,	Արտերկրում դեղերի գրանցման ծառայությունների ձեռք բերման ծախսերի համաֆինանսավորման պետական աջակցության գործող մեխանիզմի առկայություն

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՈՆ 4.4. Ներդրումներ ոլորտի տեղական ընկերությունների կապիտալում	Տեղական ընկերությունների գործունեության ընդլայնում՝ պայմանավորված կապիտալի ներգրավմամբ

Գործողություն	Պատասխանատու/ հրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
